

կիէլ: Դիտէի Դաւիթ արքայի թուլութեանց և Սողոմոն թագաւորի իմաստութեան մասին, բայց ոչ սաղմոսների ներքին, խոր, վեհ ոգին էին ինձ մատչելի դարձրել և ոչ Սողոմոնի գրքերի մէջ եղած անսպառ իմաստութիւնները պարզել: Դիտէի Յիսուսի կեանքի բոլոր գէպերը, բայց որոշ հասկացողութիւն չունէի լերան քարոզի, Յովհաննու աւետարանի վերջին գլուխների, առաքելոց թղթերի բովանդակութեան՝ նոցա պարունակած անդին գանձերի մասին:

Ոչ, ժամանակակից քրիստոնէական դպրոցը չի տալիս կենդանի Աստուծոյ կամքի ճանաչողութիւն, նոյն խաչ հասկացողութիւն չի տալիս թէ ինչպէս պէտք է ապրել ըստ հաւատոյ և բարիք գործել, պատասխան չի տալիս ինչ է ճշմարտութիւնը և ինչպէս պէտք է ապրել հիմնական—կենսական հարցերին:

Մամբրէ վարդապետ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅՈՒՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՅԻ

Ռուսաց «Եկեղ. համըսւարներ» շարաթաթերթի մէջ Քորէայից տպուած մի թղթակցութիւն մանրամասնօրէն նկարագրում է Ռուսաց առաքելական գործի դրութիւնը ծայրագոյն արեւելքում: Թղթակիցը ցու է յայտնում այն ըանի համար, որ ռուսաց պետութիւնը կարեւոր ուշադրութիւն չի դարձնում առաքելական գործի վրայ և չի տալիս պահանջուած նիւթական ապահովութիւնը. այն ինչ քաղաքական այս կամ այն նպատակի իրագործման համար ահադին դումարներ են ծախսուում: Չնայելով առաքելութեան նիւթական սուղ միջոցներին, ըստ թղթակցի վկայութեան, նա կարողանում է մեծամեծ յաջողու-

թիւներ ունենալ, տարածելով տեղական ազդարնակութեանց մէջ ուղղափառ դաւանութիւնը: Գործին առանձնապէս նպատում է երդեցիկ խումբը, որ ժամաւորներն մեծ բազմութիւն է գրաւում դէպի ռուսաց եկեղեցին:

— Ռուսաց պարբերական մամուլը մինչև այժմ դեռ դաւում է ապրիլի 6 և 7 Քիչնեում կատարուած հրէական ջարդի խնդրով: «Եկեղ. համբաւաբեր» շաբաթաթերթը գտնում է, որ խռովութեանց և անկարգութեանց բուն պատճառը Հրէաներն են եղել և մէջ թէ քրիստոնեայ ռուս բնակչութիւնը: Սկզբում, ասում է շաբաթաթերթը, կատարածի և խժշտութեանց անմիջական տպաւորութեան տակ, համարեա՞ թէ ամբողջ Ռուսաստանի համակրութիւնը Հրէաների կողմն էր, իսկ ռուս բնակչութեան բաժինը մեղադրանքն էր միայն: Եւ այդ համակրանքին արձագանք տուեց պարբերական մամուլն մէջ Կրօնշտատի աւագ քահանայ Իօաննը իւր մի նամակով և Վոյընի թեմակալ առաջնորդը, որ ժխտմիբի մայր եկեղեցում իւր մի քարոզով խիստ յանդիմանեց քրիստոնեաներին իրենց կատարած բարբարոսական գործի պատճառով: Եւ այսպէս հետզհետէ հաստատուեցաւ այն համոզմունքը, որ Հրէաներն անպայման արդար են, իսկ քրիստոնեաները բացարձակապէս մեղաւոր: Այդ մտքով յօդուածներ լսյս տեսան թէ հրէական թերթերում և թէ հրէասէր ռուս լրագրներում: Բայց ներկայումս, քանի որ ամէն ինչ պարզուած է (հարկաւ ըստ հակահրէական ռուս թերթերի), Հ. Իօանն իւր խօսքերը մի նոր նամակով, որ տպուած է ЗВАНЯ թերթի մէջ, յետ է վերցնում, նուիրաբերելով Քիչնեի ռուս քրիստոնեաների օգտին 800 բուրլի: Ահա Հ. կրօնշտատակու նամակը, որ քաղուածաբար առաջ ենք բերում այստեղ:

Յանուն Յիսուսի Քրիստոսի սիրեցեալ քրիստոնեայ եղբայրներ որ ի Քիչնե: Պարբերական թերթերի մէջ իրար ետեից լսյս տեսնող տեղեկութիւններից իմացայ և համոզուեցի, որ Հրէաներն են եղել ապրիլի 6 և 7 Քիչնեում կատարուած անկարգութեանց, խռովութեանց և սպանութեանց պատճառը: Տեսայ և համոզուեցի մանաւանդ մասնաւոր նամակներից, որ ես հետզհետէ ստանում էի երկար ժամանակ Քիչնեում ապրող իմ բարեկամներից, որոնք, տեանտաւս լինելով զարհուրելի տեսարաններին, վկայում են քրիստոնեաների անմեղութիւնը: Ուստի ներեցէք ինձ իմ այն յանդիմանութեան և կշտամբանքի համար, որ արել էի ձեզ:

— Եկեղ. Համբ. շաբաթաթերթը, խօսելով ռուս քահանա-

յախան դասակարգի մասին, մասնաւորապէս կանգ է առնում գիւղական քահանաների և նրանց խնամքին յանձնուած համայնքների վրայ և բացատրում թէ ինչ է ուսւ գիւղական համայնքների պահանջն իւր հոգեւոր հովուից:

Ուսւ գիւղացի ժողովուրդը, որի մեծամասնութիւնը անգրագէտ է, ուրիշ պահանջ չունի իւր քահանայից, քան այն, որ վերջինս իւր բարի օրինակով առաջնորդ հանդիսանայ իւր ժողովրդին և միեմթարէ նրան իւր պարզ, դիւրամբռնելի և մատչելի քարոզներով ու հոգեւոր զրոյցներով: Նկատուած է, ասում է յիշեալ շաբաթաթերթը, որ այն քահանաները, որոնք ժամապաշտութիւնն անթերի են կատարում և ընթերցութեանը կարգում են պարզ առողանութեամբ՝ ժողովրդին հասկանալի կերպով, մեծ յարգանք են վայելում ժողովրդի կողմից: Յանկալի է, որ այդպիսի քահանաների թիւն աւելանայ:

— «Նկեղ. համբաւաբեր»-ը հաղորդում է, որ յունիսի սկզբներին եկատերինոսյաւի նահանգի Ալէքսանդրովսկ քաղաքում բացուել է խուլ և համբերի մի դպրոց 120 հոգու համար: Այդ կարգի դպրոցները, ինչպէս յայտնի է, գտնուում են Մայր Թագուհու Բարձրագոյն խնամակալութեան տակ: Մտադրութիւն կայ նոյն դպրոցի բաժանմունքները բանալու եւրոսլաւի և Պետերբուրգի նահանգներում:

— Մայիսի 13-ին Նովոօրոգի հոգեւոր սեմինարիայի ուսուցիչ վարդապետներից մէկը բարձր դասարանների աշակերտներին կարդացել է մի դասախօսութիւն: Գտախօսը անհրաժեշտ է համարում հոգ. սեմինարիաների ուսնելին ծանօթացնել նաև օրէնսդրութեան ընդհանուր սկզբունքների հետ: Հոգեւոր սեմինարիաների ուսները, որոնցից է կաղմուում ուսւ հոգեւորականութիւնը, պատրաստուում են ծառայելու եկեղեցու և ժողովրդի կրօնական—բարոյական շահերին: Ուստի բաւական չէ միայն կրօնական դիտելիքներ ձեռք բերելը, եկեղեցական իրաւագիտութիւն սովորելը, այլ իւրաքանչիւր հոգեւոր հովիւ, որ կոչուած է ժողովրդի բարօրութեան գործին ծառայելու, տեղեակ պիտի լինի նաև պետական օրէնսդրութեան ընդհանուր հիմունքներին:

— Կ Պոլսի տիեզերական Պատրիարքը իր ընտրութեան և դահ բարձրանալու առթիւ ուղղել էր մի գրութիւն բոլոր Սրթոգոքս եկեղեցիներին, հրաւիրելով խաղաղութեան, եղբայրական միութեան և աւելի կենդանի սերտ յարաբեցութեան օրթոգոքս եկեղեցիներին: Հիմնուելով այն համակրական հաւատարմացումների վրայ, որ արտայայտել են այդ եկեղեցիներին ներկայացու-

ցիւնները, պատրիարքը վերջերս ուղղել է մի թուղթ Ռուսաց կառավարչական Ս. Սինոդին, Այդ թուղթն է որ մէջ է բերում Դերք. Вѣст. իր № 24-ում, իբրև մի շատ կարևոր երևոյթ օրթոդոքս եկեղեցիների կեանքում: Պատրիարքը յայտնում է, որ ինքը ընդհանուր օրթոդոքս եկեղեցիների տեսակէտից ամէն մի կարևոր խնդրի առթիւ այսուհետև պէտք է հարցնէ այդ ինքնուրոյն եկեղեցիների կարծիքը, որպէս զի յառաջ բերէ եղբայրական միութիւն և ջերմ հաղորդակցութիւն քոյր եկեղեցիների մէջ:

Այդպիսի առաջնակարգ կարևորութիւն ունեցող հարց է համարում Պատրիարքը եկեղեցիների միութեան խնդիրը. ուստի առաջարկում է որոշել օրթոդոքս եկեղեցիների վերաբերմունքը դէպի կաթոլիկ և բողոքական եկեղեցիները և թէ ինչ եղանակով այդ եկեղեցիներին վերադարձնել ընդհանրական եկեղեցու գիրկը, որի անաղարտ պահանջը համարում է ի հարկէ օրթոդոքս եկեղեցին: Թէև մեծ ցաւ է պատճառում Պատրիարքին այդ եկեղեցիների յամառութիւնը, բայց միութիւնը անհնարին չի համարում: Այդպիսի մի յուսատու երևոյթ է համարում հին կաթոլիկների հակումն միանալ օրթոդոքս եկեղեցու հետ. ուստի շատ ցանկալի է համարում պարզաբանել, թէ ինչպիսի տարբերութիւն կայ հին կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիների մէջ:

Պակաս ուշադրութեան արժանի չէ և ընդհանուր տօմարի խնդիրը: Հետաքրքրական է Պատրիարքի յայտնած կարծիքը այս հարցի նկատմամբ: Նա նկատի առնելով որ տօմարի խնդիրը, որքան քաղաքացիական, պետական կարևորութիւն ունի, նոյնքան և եկեղեցական, կապուած լինելով պատեքի հետ, անհրաժեշտ է համարում նախ քան խնդրի այսպէս կամ այնպէս լուծուելը ընդհանուր օրթոդոքս եկեղեցիների վճիռը: Ահա այս խնդիրները Պատրիարքը իր թղթով առաջարկում է բոլոր եկեղեցիների խորհրդածութեան:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Այն հակայական յաջողութիւնը, որ ունի ներկայումս հռոմէական—կաթոլիկ եկեղեցին արեւելքում իւր քարոզիչների ձեռքով, խիստ մեծ զայրոյթ է պատճառում ուղղափառ առաքելութեան մշակներին, որոնք ամէն կերպ աշխատում են խոչնդոտ